# 152 Դու մեր Վեմ, դու մեր հույս, դու մեր Ապավեն

(Առակներ 14:26)

1. Ով Եհո՛վա Հայր, մեր Զորությո՛ւն,
   Աղբյուր չքնաղ հույսի:
   Այն սրտում վառվող կրակ է,
   Խարիսխ է հուսալի:
   Բայց կյանքի հոգսերն են մեզ ճնշում,
   Փոթորկի պես հարվածում,
   Մեր հույսի պայծառ ճրագը
   Իսպառ մարել փորձում:

**(ԿՐԿՆԵՐԳ)**

*Դու մեր Վեմ, դու մեր հույս,*
*Դու մեր Ապավեն,*
*Օգնիր, երբ տկար ենք՝ չընկնենք:*
*Համարձակ ու վստահ*
*Խոսքդ սերմանենք:*
*Ամբողջ մեր սրտով քեզ կառչենք:*

2. Ով Եհո՛վա, Հայրն ես գթության,
   Մեր սիրտն ես ջերմացրել
   Ու դժվար պահին սփոփել ես,
   Ոգիդ ես մեզ տվել:
   Զորացնում են այս մտքերը մեզ
   Ու կրակ վառում սրտում:
   Քաջությամբ լցված՝ տոկում ենք,
   Անունը քո հայտնում:

**(Կրկներգ)**

(Տես նաև Սաղ. 72:13, 14; Առակ. 3:5, 6, 26; Երեմ. 17:7):

*snylpnw*-REA No. 152 4/16
© 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania